ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀԶՀ-ՊԸԱՊՁԲ-15/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «11» հունվարի 2016թ.

2016թ-ի հունվարի 11-ին՝ ժամը 14:30-ին, Հայաստանի զարգացման հիմնադրամի գրասենյակում՝ ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 հասցեում, տեղի ունեցավ ՀԶՀ-ՊԸԱՊՁԲ-15/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Լիլիթ	Գինոսյան	Հայաստանի զարգացման հիմնադրամի գործերի կառավարման բաժնի իրավաբան.

Հանձնաժողովի նիստին ներկա էր՝

Անի	Բազեյանը	Հայաստանի զարգացման հիմնադրամի գործերի կառավարման բաժնի գլխավոր իրավաբան-բաժնի ղեկավար:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի մեկ անդամ, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 35-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Լիլիթ Գինոսյանը, իսկ քարտուղարն էր՝ Անի Բազեյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀԶՀ-ՊԸԱՊՁԲ-15/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու հայտ ներկայացրած անձը և վերջինիս կողմից ներկայացված հայտի գնահատման մասին:

2. Մասնակցի կողմից առաջարկված գնի (գների), առաջին տեղ զբաղեցրած մասնակից որոշելու մասին:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

1. ՀԶՀ-ՊԸԱՊՁԲ-15/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԻ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Լիլիթ Գինոսյանը նշեց, որ գնման առարկայի 1-ին չափաբաժնի ընդհանուր (նախահաշվային) գինը կազմում է 1 240 000 ՀՀ դրամ, 2-րդինը՝ 397 000 ՀՀ դրամ, 3-րդինը՝ 382 000 ՀՀ դրամ, 4-րդինը՝ 1 077 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի քարտուղար Անի Բազեյանը հայտնեց, որ՝

- ՀԶՀ-ՊԸԱՊՁԲ-15/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու հայտ է ներկայացրել հետևյալ անձը (այսուհետ՝ նաև մասնակից).

Հ/h	Մասնակցի անվանում	Մասնակցի գտնվելու վայրը
1.	«Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, 0019, Պռոշյան 11/5

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- մասնակիցը հայտը պարունակող ծրարը կազմել և ներկայացրել է ՀԶՀ-ՊԸԱՊՁԲ-15/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) հրավերի (այսուհետ՝ հրավեր) պահանջներին համապատասխան.
- մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.
- մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին:

Որոշվեց՝

1. Լիլիթ Գինոսյանի և Անի Բազեյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Կողմ՝ 1
Դեմ՝ 0

2. ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Հանձնաժողովն արձանագրեց, որ մասնակիցը ներկայացրել է հետևյալ գները՝ առանց ԱԱՀ.

Չափա-բաժնի համարը	Ապրանքի անվանումը	Մասնակցի անվանումը և առաջարկած գինը (գները) (ՀՀ դրամ)
		«Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ
1.	Ցանցային օպերացիոն համակարգի համակարգչային ծրագրային փաթեթներ	853,334
2.	Ցանցային զանազան համակարգչային ծրագրային փաթեթներ	330,834
3.	Հակավիրուսային համակարգչային ծրագրային փաթեթներ	318,334
4.	Ընդհանուր նշանակության օժանդակ համակարգչային ծրագրային փաթեթներ	897,500

Հիմք ընդունելով այն, որ բավարար գնահատված հայտ ներկայացրած «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ի 1-ին չափաբաժնի գնային առաջարկը գերազանցում է ՀԶՀ-ՊԸԱՊՁԲ-15/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգի 2-րդ չափաբաժնով գնում կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները՝ մասնակցի հետ վարվեցին բանակցություններ առաջարկված գնի իջեցման նպատակով:

Բանակցությունների արդյունքում «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ի առաջարկած վեջնական գինը սահմանվեց 1 000 000 ՀՀ դրամ:

Որոշվեց՝

1. Որպես ընթացակարգի բոլոր չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ին:

Կողմ՝ 1
Դեմ՝ 0

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

Որոշվեց՝

Հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 49-րդ կետով սահմանված փաստաթղթերը հանձնաժողովի քարտուղարի կողմից հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 11:00-ին:

Կողմ՝ 1
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Լ. Գինոսյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Բազեյան _____